Հաստատված է
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
Գյումրու մասնաճյուղի գիտական խորհրդի
2018թ. նոյեմբերի 21-ի թիվ 7 նիստի որոշմամբ խորհրդի նախագահ
ՀՊՏՀ ԳՄ տնօրեն_____ Կ.Պ. Պետրոսյան
«11» _____ 2019թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի (այսուհետ՝ մասնաճյուղ) գիտական խորհրդի կազմի ձևավորման և գործունեության կարգը, նիստերի նախապատրաստման և անցկացման, որոշումների ընդունման ընթացակարգը:
2. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են գիտական խորհրդի կողմից:

II. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մասնաճյուղի գիտական խորհուրդը տնօրենի նախագահությամբ գործող ուսումնական, գիտական և գիտահետազոտական գործունեությունը համակարգող ու կարգավորող կառավարման մարմին է: Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:
4. Մասնաճյուղի գիտական խորհուրդը՝
   1) հաստատում է իր կանոնակարգը.

2) քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ մասնաճյուղում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին.
3) ընդունում է որոշումներ անվանական կրթաթոշակներ տալու
4) իրականացնում է ֆակուլտետի դեկանի, ամբիոնների վարիչների, պրոֆեսորների և դոցենտների ընտրությունները՝ փակ գաղտնի քվեարկությամբ, այն ՀՊՏՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար
5) սահմանված կարգով նախապատրաստում է դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչումներ շնորհելու մասին փաստաթղթերը ՀՊՏՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար
6) հաստատում է մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների օրինակելի կանոնադրությունները
7) նոր մասնագիտությունների գծով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում ՀՊՏՀ
8) իրականացնում է մասնաճյուղի կանոնադրությունից բխող, մասնաճյուղի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ.
9) պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած ընդհանուր չափաքանակների շրջանակում, տնօրենի ներկայացմամբ, հաստատում է ըստ մասնագիտությունների վճարովի հիմունքներով ընդունելության տեղերը.
10) քննարկում և ՀՊՏՀ-ի հաստատմանն է ներկայացնում մասնաճյուղի ուսումնական մասնագիտությունների ու մասնագիտացումների անվանացանկը:

III. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

5. Համալսարանի գիտական խորհրդի անդամների թիվը չի կարող գերազանցել 15-ը: Համալսարանի գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են տնօրենը, որը գիտական խորհրդի նախագահն է, գիտական քարտուղարը, ուսանողական խորհրդի նախագահը, մասնաճյուղի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև կարող են ընդգրկվել

դասախոսներ: Վարչական պաշտոնյաների թվաքանակը չի կարող գերազանցել խորհրդի անդամների 50 տոկոսը, վարչական աշխատողների մեջ առնվազն մեկը պետք է լինի ոչ ստորաբաժանման ղեկավար:

Վարչական աշխատողների ընտրության ժամանակ ստորաբաժանումները ներկայացնում են գիտխորհրդի իրենց թեկնածուին որը հետագայում մասնակցում է գիտխորհրդի վարչական աշխատողի ընտրությանը:

6. Մասնաճյուղի գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսն ուսանողներ են՝ ներառյալ ուսանողական խորհրդի նախագահը, որոնց առաջադրում ու ընտրում է համապատասխան մակարդակի ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմինը՝ ուսանողական խորհուրդը:
7. Գիտական խորհրդի կազմը հաստատում է տնօրենը:
8. Գիտական խորհրդի աշխատանքներին հրավիրվում են համապատասխան հարցեր ներկայացնող ստորաբաժանումների ղեկավարները:

Խորհրդի գործունեության 5 տարին լրանալուց հետո խորհուրդը իր գործունությունը կասեցնում է հանձնարարելով տնօրենին տասնօրյա ժամկետում ձևավորելու նոր խորհուրդ, խորհրդի վարչական աշխատողները ընտրվում են բուհի վարչական աշխատաողների ընդհանուր ժողովում, իսկ դասախոսները ամբիոնների համատեղ նիստի ժամանակ: Յուրաքանչյուր ամբիոնից պետք է ընտրվի նվազագույնը մեկ հոգի:

IV. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Գիտական խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:
10. Գիտական խորհրդի հերթական նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ գիտական խորհրդի նախագահի կամ գիտական խորհրդի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:
11. Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են տնօրենը (գիտական խորհրդի նախագահ) և գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար):
12. Գիտական խորհրդի քարտուղարը, գիտական խորհրդի նիստ (հերթական կամ

արտահերթ) հրավիրելու և նիստի օրակարգի մասին գրավոր ծանուցում է գիտական խորհրդի անդամներին նիստի անցկացման օրվանից առնվազն երկու օր առաջ: Գիտական խորհրդի տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ փաստաթղթային փաթեթը (որոշումների նախագծեր, տեղեկանք-հիմնավորումներ և այլն), որպես կանոն, գիտական խորհրդի անդամներին է հանձնում ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից մեկ օր առաջ:

13. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում է գիտական խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:
14. Գիտական խորհրդի նախագահը, բացելով նիստը, հայտարարում է քվեակազմի առկայությունը և քվեարկության է դնում նիստի օրակարգը:
15. Գիտական խորհրդի անդամները կարող են առաջարկել նիստի օրակարգում ընդգրկել այլ հարցեր, ինչը սահմանված կարգով դրվում է քվեարկության:
16. Նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ինչպես նաև ելույթների տևողությունը որոշում է գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ:

V. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

17. Գիտական խորհրդի նիստերում քարտուղարում է համալսարանի գիտական քարտուղարը: Նա գիտական խորհրդի նախագահի հետ կազմում է գիտական խորհրդի նիստերի աշխատանքային պլանները, համակարգում է գիտական խորհրդի նիստերի նախապատրաստման աշխատանքները, կազմում է նիստերի օրակարգերը՝ դրանք համաձայնեցնելով նախագահի հետ, տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ անհրաժեշտ նյութերը տրամադրում է գիտական խորհրդի անդամներին, պատրաստում է քվեաթերթիկները, գրանցում նիստին մասնակցող գիտական խորհրդի անդամներին, կազմում է գիտական խորհրդի նիստերի արձանագրությունները և որոշումները, վարում գործավարությունը և ապահովում փաստաթղթերի պահպանությունն ու օգտագործումը:

VI. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

18. Հաշվիչ հանձնաժողովը ստեղծվում է գիտական խորհրդի որոշմամբ՝ խորհրդի

անդամների փոխատեղման սկզբունքով: Յուրաքանչյուր նիստում հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատում է գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ՝ ըստ գիտական խորհրդի ցուցակային կազմի:

19. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է քվեարկություններ, պարզաբանում է քվեարկության ընթացքում առաջացող հարցերը, քվեարկության կարգը, ապահովում է քվեարկության կարգի պահպանումը, կազմում է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ և այն ներկայացնում է գիտական խորհրդի հաստատմանը:

VII. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի նիստին մասնակցած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդը դրա մասին այլ որոշում չի ընդունել, և կենսագործվում են մասնաճյուղի տնօրենի հրամաններով:
21. Գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման, գիտական կոչումների ներկայացման, ֆակուլտետի դեկանի և ամբիոնների վարիչների ընտրությունների և այլ մրցույթները իրականացվում են փակ գաղտնի քվեարկությամբ:
22. Փակ գաղտնի քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկները պատրաստում է գիտական քարտուղարը՝ մինչև գիտական խորհրդի նիստը:
23. Քվեաթերթիկում նշվում են գիտական խորհրդի նիստի անցկացման ամիս-ամսաթիվը, տարին, հերթական համարը, քվեարկության դրվող հարցի բովանդակությունը, քվեարկության տարբերակները («կողմ», «դեմ»):
24. Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահը գիտական խորհրդի նիստում տեղեկություններ է հաղորդում քվեարկության և քվեաթերթիկը լրացնելու կարգի մասին:
25. Հաշվիչ հանձնաժողովի անդամներն առանձին սենյակում բացում են քվեատուփը և իրականացնում են քվեարկության արդյունքների հաշվառում:
26. Քվեաթերթիկը համարվում է վավեր, եթե դրանում քվեարկվել է մեկ տարբերակ:
27. Ձայների հաշվառման արդյունքները ձևակերպվում են հաշվիչ հանձնաժողովի արձանագրության մեջ՝ ստորագրված բոլոր անդամների կողմից, և հայտարարվում են գիտական խորհրդի նիստում՝ հաստատման համար:

VIII. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

28. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունը երկու օրինակից կազմում է գիտական քարտուղարը: Արձանագրությունը ստորագրում են գիտական խորհրդի նախագահը և քարտուղարը:
29. Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, նախագահը, քարտուղարը, քվեակազմը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերի բովանդակությունը, քվեարկության արդյունքները և գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները:

IX. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

30. Գիտական խորհրդի որոշմամբ, անհրաժեշտության դեպքում, ստեղծվում են հանձնաժողովներ (մրցութային և այլն), որոնց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունները, աշխատանքի կարգը սահմանվում են գիտական խորհրդի կողմից:
31. Հանձնաժողովների խնդիրն է իրենց կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկության ներկայացումը:
32. Հանձնաժողովների կառուցվածքը և կազմը որոշում է գիտական խորհուրդը:
33. Հանձնաժողովներն իրենց ոլորտին վերաբերող հարցերը քննարկում ենգիտական խորհրդի և տնօրենի հանձնարարությամբ:
34. Հանձնաժողովներն իրավունք ունեն համալսարանի կառավարման մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր ու նյութեր:
35. Հանձնաժողովների նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ի ներկայության դեպքում: Հանձնաժողովների նիստերի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են նախագահը և քարտուղարը:
36. Հանձնաժողովների փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:
37. Հանձնաժողովների անդամներն իրավունք ունեն հանձնաժողովում քննարկված

հարցերի վերաբերյալ ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել գիտական խորհրդին:

X. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

38. Սույն կանոնակարգի ընդունումը և դրա մեջ առաջարկվող փոփոխություն-ներն ու լրացումները կատարվում են գիտական խորհրդի որոշմամբ:

39. Գիտական խորհրդի գործունեությունը, նրա իրավասությունների ժամկետները կարող են դադարեցվել նրա հետագա գոյությունը բացառող օրենսդրական փոփոխությունների լուծարման և օրենքով սահմանված այլ դեպքերում: